ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

<<21>> 08 2012թ. № 034/02-470

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան,

Ուղարկվում է Սպիտակի քաղաքապետի 2012թ. օգոստոսի 21-ի <<Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու մասին>> թիվ 300 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով՝

ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ.՝ Ա. Ֆրանգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

<<_21_>> օգոստոսի 2012թ. № 300

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 11.09.2006թ. թիվ 15-Ն հրամանով սահմանված <<Համայնքային ծառայողի ատեստավորման կարգի>> 9-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2011թ. հոկտեմբերի 20-ի <<Ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը հաստատելու մասին>> թիվ 35 հրամանը՝ ***որոշում եմ.***

1.Հաստատված ցուցակի համաձայն ատեստավորման ենթակա Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի հետևյալ համայնքային ծառայողների հերթական ատեստավորումը անցկացնել Սպիտակի քաղաքապետարանում 2012թ. հոկտեմբերի 1-ին.

1) Ասատրյան Գևորգ Գրիշայի – Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկ. 2.3-8/ -ժամը 10.00-ին
2) Սարդարյան Ռուզաննա Սամվելի – Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ /ծածկ. 2.3-14/- ժամը 10.00-ին

2.Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Վ. Սահակյանին սույն որոշման մասին տեղեկացնել ատեստավորման ենթակա համայնքային ծառայողներին և ատեստավորման հանձնաժողովի անդամներին:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ծառայողների ատեստավորման հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու, մասնակիցներին թեստավորման անկացման հետ կապված տեխնիկական հարցերը բացատրելու, նիստերը արձանագրելու և հանձնաժողովի անդամների հետ միասին դրանք ստորագրելու նպատակով լիազորել Սպիտակի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ Ազգանուշ Ֆրանգյանին:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2012թ. օգոստոսի 21
ք.Սպիտակ